

† Մարիամ Խատիսեան

Հայ գրական և հասարակական գործիչների կամարի սակաւաթիւ փայլուն աստղերից մէկ-մէկ վայր են ընկնում և յիշեցնում բանաստեղծի՝ «Հայրիկ. տես, տես, աստղը թուաւ, հետքից պայծառ գիծ թողեց» խօսքը:

Երկարատեւ և ծանր հիւանդութիւնից յետոյ փետրուարի 9ին վախճանուեց Մարիամ Խատիսեանը 70 տարեկան հասակում և թաղուեց Վանքի աւագ եկեղեցու գաւթում, իր ամուսնու կողքին:

Հանգուցեալը հասարակական և պետական գործիչ Յովհաննէս Խատիսեանի կինն էր և անմուսնալի կոստանդինի ու շնորհալի Աղէքսանդրի (Թիֆլիզի այժմեան քաղաքագլուխ) մայրն էր: Մտուր իր պշտղիցն է ճանաչուում:

Մարիամ Խատիսեանը իր կրթութիւնը և ուսումը ստացեալ է Թիֆլիզի կանանց ինստիտուտում և առանձնապէս ուսել է իր մայրենի լեզուն, որը և ուսուցել է իր որդոցը: Նա ընտանիքում իր ամուսնու յրազուխ կին և պսակը լինելով հանդերձ՝ իրեն նուիրել էր և՛ գրական աշխատանքներին. յայտնի էր հասարակութեան մէջ իբրեւ կրթուած, բարձր ինտելիգենտ կին և իբրեւ հայ գրող ու հասարակական գործիչ, որ և վայելում էր մեծ յարգանք:

Հանգուցեալի գրական աշխատութիւնները կազմում են 1877-1878 թուականներին լոյս ընծայած «Արեւելեան հարցը» (Восточный вопрос), «Հեղինէ», «Նոր ճանապարհի վրայ», «Փնայա որսողներ», «Դժբաղդ կին» և այլն վիպական երկերը:

Հանգուցեալը 30 տարի սրանից առաջ իր տան սալոնում մի խումբ առաջաւոր և ինտելիգենտ հայ կանանց հետ խորհրդակցելով՝ գլխաւոր հիմնադիրներից մէկն եղաւ այժմեան Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան, որի նախագահն էր շատ տարիներ և որի օգտին այժմ թողել է կտակով 10,000 ռ.:

Թիֆլիզի հայ կանայք Մարիամ Խատի-

սեանի մահուամբ կորցնում են իրենց լաւագոյն ներկայացուցիչներից մէկին:

Հանգիստ ոսկերացող, ժրագլուխ կին լաւ մայր և գրական ու հասարակական համեստ գործիչ:

Տ. Ե.

«Հովիտ» Թիւ 7

Հնագիտական ընկերութիւն մը

Մոսկուայի մէջ նկարիչ Պ. Սարեանի նախաձեռնութեամբ կազմուած է հնագիտական ընկերութիւն մը՝ որուն նպատակը պիտի ըլլայ հայկական հնութիւններու հետազոտութիւնն ու պահպանութիւնը:

«Ժամանակ» Թիւ 1718

ՊԵՐՆԵՄԱՆԻ ԵԱՂԻՊԷ



Անցորդ, զգոյշ, զիս մի՛ կոխեր անխնայ,
Զէ՛ որ հողերն անշնացած այս շիրմին
Նւրբարկան ու հողիկան բան մ'ունին,

Զէ՛ որ երէկ ես երկունքով մը ծընայ...:

Իմ մայրս՝ այս հոգի կէս կաւ

Ուր պատանի մ' կը նընջէ, —

Իմ հայրս արցոնքը եղաւ

Թըշուառ կընո՛ւ մը որ յաճախ հոս գաւով

— Անցորդ, ես քեզ կը պատմեմ զայս սոսկաւով, —

Գետին ընկած կը ճըլէ

Աղէկոտոր ողբերգութեամբ մը կու լայ

Յիշատակներն իւր անդամնիկ կուկուլայ:

«Այ իմ պաւստ, իմ անուշի՛կ դու որդեակ...»

Անժառ հողուղ ես մատաղ...

Ինչո՞ւ կանխիկ չընողեցին քու մօր դիակ...

Ինչո՞ւ ապրիմ ես խաղաղ...

Երբ լոյսն ալեքս իմ ժընեց

Երբ իմ բաժին լաց ու հեծ...

... Անուշ որդեակս իմ կուկուլ

Ա՛խ քու հոգուղ ես սեռնիմ,

... Ա՛խ բացուի՛ հողն ինձ ապա կուլ

Միւսին քեզմէ ըմբկնիմ...»:

Անցորդ, զգա՛, զիս մի՛ կոխեր անխնայ,

Անգամ մօր մ'արցունքներէն ես ծընայ:

Հ. Գրո՛ւ Այսօրեան